

Սմբատ Բիւրատ  
Թարգմանութիւն «Փիիկնիկ», Ի  
Աղեփասնորհիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՆՍԱՆ

Ղր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է  
Ձեռագիր ԵՏ՝ չ'դարձուի

# Փ Ի Ի Կ Ն Ն Ի Կ

Կը ծախուի ՄԷԿ դրուս ողջի

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ Բպլ. 6  
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

10 ՅՈՒԼԻՍ 1902

Թիի 4

## ՊՐԻԻՔՍԷԼԻ ԳՕՆԿՐԷՆ

ՈՒ

ԱՐՏԱՍԱՆՍԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ



Վերջապէս եւրոպական կարևոր թերթերն ու հեռագրական գործակալութիւնները հաղորդեցին մեծ լուրը. Պրիքսելի Գօնկրէն, հայկական հարցին համար, պիտի գումարուի Յուլիսի 17 ին եւ 18 ին:

Այս անգամ, ԼԱՀԷՅԻ Համաժողովը չէ՛ որ պիտի դումարուի տիեզերական խաղաղութեան համար, տիեզերակալ Սպիտակ Չարին հրաւերով: Դիւանագիտութիւնը, գծուծ ու բարդ հաշիւներովը քիթը պիտի չը խոթէ հոն. կայսր ու թագաւոր, նախարար ու դեսպան, երկրիս մեծ ու պզտիկ աստուածները չ'են որ պիտի դատեն ու վճռեն մեր բազմը: Քաղաքակիրթ մարդկութեան, գիտութեան ու գրականութեան, գործին ու գեղարուեստին փառքերը պիտի միանան հոն, իրարու պիտի մօտենան մեծ ու ազատ

խորհողները, բոլոր երկիրներուն՝ մեր չարչարուող Հայաստանին, մարտիրոսացիին բարեկամներուն բանակը հոն պիտի զերար դտնեն, արգարութեան ու իրաւունքին ժամադրավայրը պիտի ժողովին:

Բրո Արմենիան իր 25 Յունիսի վերջին թիւով հրատարակած է Ա. Յանկը Հայասէր Գօնկրէին մասնակցող մեծանուն անճնաւորութանց, որոնց թիւը, միայն Յրանսայէն, կը հասնի 225ի. այս թիւին մէջ են 35 երեսփոխաններ, 27 սենատորներ, 39 մամուլի մարդեր, ամենագլխաւորներէն. նոյնպէս ակադէմիականներ, համալսարաններու թոճէտէտներ, անուանի բժիշկներ ու փաստաբաններ, վաճառականներ, գիւնագան արհեստաւորներ ու գիտնականներ. նաեւ, բարոյագետներ ու նախարարներ են, են:

Այդ պերճախօս անուններուն վրայ բառ մ'իսկ աւելցընել աւելորդ է: Այս ճշմարիտ մարդիկ պիտի ընեն ինչ որ չ'ուզեց կամ չը կըցաւ ընել ու չըրաւ պառաւ, նիւթապաշտ ու եսամոլ Դիւանագիտութիւնը: Այո, ասոնք պի-

տի ընեն աւելին. քնացող խիղճերը պիտի արթնցնեն ամեն երկիրներու կրօններուն ու լեզուներուն, կուսակցութեանց ու դասակարգերուն:

Ժողովուրդները կը շարժին:

Ժողովուրդին հարազատ ծնունդներուն ազազակը պիտի լսենք մօտէն, անոր խորթացած ու փճացած ծնունդներուն երեսն ի վեր պիտի պոռան:

Ու գահերը պիտի ցնցուին յետոյ. քներու տակ որ պիտի գողգղան:

Ու թագերը պիտի շարժին ճակատներու վրայ որ պիտի խարանուին: Բողոքը պիտի բարձրանայ:

Ու պիտի լսելի ըլլայ վերջապէս...:

Մայր—Հայրենիքին հեռանկատ անկիւններէն խուլ մօտենչներ կը հասնին մեզի. Անդրանիկ, Ի. Գարուն առաջին հայ զինւորն է որ իր քաջարի խումբերով ամուրները քաշուած, կը կռուի այսօր հարիւրապատիկներու, վաղը թերեւ պիտի կռուի հազարապատիկներու գէմ: Ս. Կռիւր կը մղէ պիղծ լուծը թօթուելու համար իր ցեղին վղէն:

Քիչ մը հետեւինք Թ. Ա. Նի «Արեւելի» ին, որ երեցաւ Յունիսի 28ի թիւով:

Կարգանք ուշով ու խորհի՛նք...:

«Ամենէն վրդովեցուցիչ շշուկները կը չրլին դեռ Կ. Պօլիս, Օսմ. Կայսրութեան քանի մը մասերուն կացութեանը վրայ: Արդէն շատ մը շարժումներ է ի վեր Պասնոյ ու Մշոյ քրիստոնեայ բնակչութիւնը մատնուած է ո՛չ միայն Չէրքէզներուն յարձակումովը խիստ արգարացող անհանգստութեան մը, այլ և ենթակուած է խժգժական աւարքներու, ուր խիստ հաստատ նախընթացներ և աներեն իրեն տեսնել չէր գործրկի մը յառաջընթաց նշանները:

Կը յուզուի Արևմուտքը տագնապէ այս ազազակներէն: Քանի մը ֆրանսացի երեսփոխաններ — որոնք Սենեկին բոլոր կուսակցութիւնները կը ներկայացնեն, ծայրագոյն ձախա-

կողմէն ծայրագոյն աշակողմեանը—ահռելի ոճրի մը վերագարձէն մարդկութիւնը գերծ պահելու միահամուռ փափաքով, Հանրապետութեան արտաքին գործոց նախարարին քովը գային, իրեն մատենանշելու համար վտանգն ու յանձնարարելու քանի մը միջոցներ, որոնց արդիւնաւորութեան վրայ բնաւ չէին խարուիր, այլ որոնք բնութիւնն ունենալ կը թուէին ծանուցագրելու առ որ անկ է, Փրանսային տեւական ու գործօն համակրութիւնները:

Պ. Տէլգասէ նորէն ջանացած է հաստատելու թէ՛ ինք չէ՛ դադրած շահագրգռւելէ այսքան նուիրական դատով մը: Եթէ միջազգային յարաբերութեանց վիճակը չէ՛ ներած եւրոպական համաձայնութեան իր հաւաքական դիմումները վերսկսելու Կ. Պօլիս, գործադրուելու համար դաշնագիրներն ու բարենորոգումները, ուր կը հանգչի Թուրքիոյ փրկութիւնը. եթէ Փրանսայի ու Ռուսիոյ սահմանափակ գործողութիւնը բռնի պարտաւորուեցաւ մէկդի թողուլ սկզբունքի մեծ խնդիրներն և խիստ յաճախ փակուած մնալ զուտ մարգասիրական միջամտութեան մը սահմանին մէջ, անկարող՝ անհետացնելու այս շարիքին խորունկ պատճառները, — դարձեալ ո՛չ նուազ շնորհակալ պէտք է ըլլալ ֆրանսական դիւանագիտութեան ու իր պետին՝ որ ի յայտ բերաւ այս գործին մէջ հաստատամտութիւն մ'ու յարտուող ոգի մը:

Նախարարը բարեհաճեցաւ ստանձնել գոհացումի սկզբնաւորութիւն մը տալ բաղձանքներուն բնակչութեան մը, որ կը սոսկայ համիտեան բռնակալութեան քաղաքային ու վիւնորական, կանոնաւոր ու անկանոն գործակալներուն հետ գլուխ գլխի հանդիպումէն, անյապաղ զրկելով ֆրանսացի ներկայացուցիչ մը Մուշ, իբր վկայ ծառայելու հոն կամ թերեւ իբր սանձ Չէր-

քէզներուն ձեռնարկներուն: Սոյն դի-  
տաւորութեան յայտարարութիւնը մի-  
այն՝ զօրեց նորէն ապահովել թշուառ-  
ներ որոնք յաւիտենապէս կէս-վայրե-  
նիի մը քմահաճոյքին հարուածին տակ  
կը զգան իրենք զիրենք:

Ուստի պէտք է խնդակցիլ այս  
միջադէպին: Ինչո՞ւ համայն պէտք է որ  
մինչ հորիզոնը կը թուի նօրէն քիչ մը  
պարզուիլ Մեծ Հայաստանին կողմէն,  
նոյն ժամուն իսկ ամպեր բարձրանան  
Կիլիկիոյ կամ Տօրոսի կողմէն:

Գործակալութիւնները Ձեթունէ,  
Հաճոնէ, Ատանայէ, Սիսէ ծանրակշիռ  
կոիւններու լուրեր կը հասցընեն մեզի:  
Ամենէն աւելի սարսափ ձգողը՝ վառօ-  
դի, փամփուշտներու և հրազէնքերու  
սիսդէմաւոր բախումն է Ձեթունի  
չըջակայքի գիւղերուն միւսլիման բնա-  
կիչներուն:

Քաղաքային պատերա՛զմն է որ կը  
պատրաստուի երկրին քրիստոնեանե-  
րուն դէմ: Իրաւունք կայ վախնալու  
նոր փորձէ մը Ձեթունի դէմ, այդ հը-  
պարտ միջնաբերդը, Տօրոսի կշտին Հայ-  
աստանի այդ յառաջապահ ամրոցը, որ  
գիտցաւ 1896ին ընծայել երկու ամ-  
սու դիւցազնական ու անյաղթելի դի-  
մադրութիւն մը, Լարիսայի յաղթող  
էդիէմ բաշայի գնդերուն:

Ձեթունի մէջ, Տօրոսի ցեց ու սեպ  
սարի մը վրայ դրուած այդ արծիւնե-  
րու բոյնը, քրիստոնեայ քաջարի ժո-  
ղովուրդ մը, մինչև ակռաները զին-  
ուած, հօրէ որդի զէնքերու գործա-  
ծութեան վարժ, ժառանգականորէն  
անվեհեր, ինք իրեն շինած է անբռ-  
նաբարելի ապաստան մը ժԼ. դարուն  
վերջէն ի վեր:

Փառաւոր պատմութիւն մը, լեռ-  
նական ու գեղջուկ դիւցազներգու-  
թիւն մ'է որ կատարուեցաւ այդ բար-  
ձանց վրայ, ուր ազատութեան ոգին  
ու բարքերը, կորովի հայրենասիրու-  
թիւն մը, անարատ պահուած են, նման

կատարներուն կոյս ձիւներուն: Միշտ  
թուրն ու հրացանը ձեռքը, Ձեթուն-  
ցիք իրենց արիւնով վճարած են գրե-  
թէ ազատ ապրելու իրաւունքը: 1862ի  
մեծ ապստամբութեան հետեանքով,  
որ վերջացաւ Աղիզ բաշային ջախջա-  
խումովը, նարոյէօն Գ.ի միջամտու-  
թիւնը՝ 25000 Ձեթունցիներուն համար  
Լիբանանի կամ Սամոսի ձևին համանը-  
ման վարչութեան մը խոստումը ըս-  
տացաւ:

Իշխան մ'ունին հիմայ հելլենազ-  
գի ու քրիստոնեայ, որ մեծ տէրու-  
թեանց պահանջման վրայ՝ հազած է  
կառավարչի տիտղոսն ու պաշտօնները,  
և հետեաբար, ըստ օրինի, անոնց  
հսկողութեան ու անոնց երաշխաւորու-  
թեան տակ: Իր իշխանութիւնն անուա-  
նական կը թուի: Իրօք, ճշմարիտ իշ-  
խանութիւնը կը վերաբերի ժառան-  
գական չորս իշխաններուն, որոնք Ձե-  
թունցի են և հայկական դաշնակցու-  
թեան պատուիրակներ:

Խիստ շատ զիրար բռնող ախտա-  
նիչներ կը ծանուցանեն բիրտ ուժով  
մտաւուտ փորձ մը Հայաստանի այս  
ապահով ամրոցին դէմ: Յուսալի է թէ՛  
Եւրոպան պիտի գիտնայ առաջն առնել  
այդ ձեռնարկեն ու յիշեցընել Թուր-  
քերուն թէ՛ վերջապէս ա՛լ ատենն էր  
բարենորոգումներուն ճամբան մտնելու  
և յարգելու փոխանակագիրներ որոնց  
դէմ խիստ երկար ատենէ ի վեր բու-  
ղսքուած է:

Ահա՛ քաղաքակրթեալ աշխարհին  
ուշադրութիւնը տենդալիօրէն կը դառ-  
նայ այս հարցին վրայ, ներկայ ժա-  
մուն ամենէն ծանրակշիռներէն մին,  
այն Գօնկրէով որ պիտի գումարուի  
Յուլիսին Պուլսքէլ, և ուր պիտի  
բազմին, յայտնելու համար իրենց հա-  
մակրութիւններն ու բանաձևելու գործ-  
նական առաջարկներ, ո՛չ միայն բոլոր  
ազգերուն ներկայացուցիչներէն, բոլոր  
խորհրդարաններու անդամներէն, այլ

և բոլոր կարծիքներուն մարդերէն, ընկերվարականութենէն արքայականութիւնը :»


Պրիւքսէլ պիտի 7-8 օրէն իր ծոցն ընդունի ուրեմն Գօնկրէի հրաւիրեալները, մարդկութեան արի առաքեալները, Հայաստանի Մեծ-Յաւին բժիշկները: Արեւելք և Արեւմուտք կը յուզուին այս պահուս:

Իսկ մենք, Արտասահմանի Հայերս, ի՞նչ կ'ընենք, ի՞նչ պէտք է ընենք: Պէտք է, մեր կարգին, ուր որ կը գրտնուինք, շուտով իրարու մօտենանք, խորհրդակցինք, կարգադիր յանձնախումբեր կազմենք, Միքիւններ կազմակերպենք անյապաղ, համակրանքի, շնորհակալութեան ու երախտագիտութեան մեր արտայայտութիւնը բարձրաձայն հասցնենք Գօնկրէին հեռագրով, գոնէ այդ կերպով հաստատենք մեր գոյութիւնը, նոր ու նպաստաւոր գազափար մը կազմել տանք մեր վրայ: հոն դումարուողներու հանդիսաւոր կերպով ցոյց տանք թէ մենք այսքան տարիներու պանդխտութեան մէջ չ'ենք դադարած մեր կարօտագին ու անձկոտ աչքերը յառելէ դէպ ի հոն, Տառապանքին երկիրը, հայրենիքը, վարդապետ մեր սակի երազներուն հորիզոնները :

Մեր 300000 նահատակներուն արիւնը, մեր քանդուած ու հրդեհուած վանքերուն ու տաճարներուն մոխրակոյտները ցուցադրենք, կրկնենք, ազազակենք, լսելի՛ ընենք Մեծ Բողոքը, մարդկութեան նուիրուած անձնուրաց առաքեալներուն, ազատութեան ախոյեաններուն, հասկըցընե՛նք իրենց թէ մենք, Արտասահմանի Հայութիւնը, գեռ վառ պահած ենք մեր վիրաւոր սրտին մէջ սէրը հայրենիքին ու յոյսը մեր մօտալուտ ազատագրութեան :


Օ՛ն ուրեմն, շտապե՛նք, Գահիրէի ու Ազեքսանդրիոյ Հայեր, սուղ է ժամը, Միքիւններ գումարե՛նք : —

## ՀԱՅՀՈՅԻՉՆԵՐՈՒՆ



Պարագաներ կան, ուր մարդ աւանայ կամաւորութեամբ ստիպուած է լռել շատ անգամ, համակերպիլ, հանդուրժել: Ընկերական բոլոր խաւերուն, կեանքի բոլոր պայմաններուն մէջ, այս անխուսափելի ենթակայութիւնը անսովոր երեւոյթ մը չէ մեզ ամենուս համար ալ: Գրագէտը, վաճառականը, արհեստաւորն ու խանութպանը, բոլոր դասակարգերը իրենց կարգին ազատ չեն այս մարդկեղէն «մեղք»ի ձգողութենէն. իրողութիւն մը որուն վրայ խօսելն անդամ աւելորդ պիտի ըլլար թերևս, եթէ ամէնքս ալ հաւասարապէս մի և նոյն ըմբռնումը ունենայինք մեր անձին ու մեր ընկերին նկատմամբ:

Սուտը սուտով արգարացնելու ճիգը, սխալը խոստովանելու քաջութեան հազուադէպ ընդունակութիւնը մարդուն՝ պատճառ մըն է գլխաւորապէս որ մենք հազիւ կրնանք այդ տիեզերական անբարոյացումին դէմ ըմբոստանալ, երբ՝ կեանքը այնպիսի պայմաններով դասաւորուած է որ գրեթէ երկրագնդին վրայ չը պիտի կրնանք գտնել մարդ մը՝ որուն ազատ կամքը ազատ գործած ըլլայ: Բայց ընդունինք մի և նոյն ատեն այն պարզ երեւոյթն ալ որ մեր ամենօրեայ կեանքը կը պարզէ. սահմանափակելու համար ըսենք թէ մեր մէջ շատեր կան որ բացարձակօրէն չար են, կան ումանք ալ որ իրենց խառնուածքին զոհերն են միշտ չարին հակամէտ. կան ալ որ ոչ այս են ոչ այն, տարտամ ծնունդներ, որ սեփական բան չունին, այսօր քեզի հետ վաղը միւսին, միշտ կրաւորականին մարդերը, իսկ ընդհանրապէս տգէտներ որոնք թէև լաւ կըզգան բայց չեն կրնար անկախօրէն մտածել ու գործել, սակայն մարդ չի



կրնար ու է կերպով մեկնել, երբ իր դէմ կը տեսնէ բարիին գիտակցութիւնովը չարին ցոյց տուած հակամիտութիւնը, ճշմարտութեան դէմ սուտին պաշտպանութիւնը, իրաւունքին տեղ անիրաւութիւնը, անճշտութեան դէմ դաւաճանութիւնը. ասոնք պարզապէս կը վայրացնեն մարդկային հոգին:

Արդ, ինչպէս գիտէք, տարիէ մը ի վեր մշտնօր Սահմանադրութեան պայքարը, որ սոսկալի համեմատութիւններ առաւ ու բարդութիւններ առաջ բերաւ. շնորհիւ քանի մը մարդոց բոլորովին գծուծ ու շահագիտական ձգտումներուն, այսօր կրնանք համարձակ ըսել թէ՛ ամենայնոցին հայն անգամ թափանցեց իրողութիւնը, ու առանց աւելոյդ մանրամասնութեանց մտնելու ըսենք թէ՛ ամէն անգամ որ բուռն դիմադրութիւն մը փորձուեցաւ օրէնքին դէմ, միշտ չարաչար անկումը դիտեցինք մենք այդ ուխտեալ թշնամի վոհմնակին, որ անխտիր ամէն հնարաւոր միջոցի դիմեց, ամէն զէնք գործածեց. մինչ, աւելորդ է ըսել, օրէնքին ու արդարութեան բարեկամները, իրենց բարոյական ուժերով կուրծք տուին բոլոր պատահականութեանց այն դիւային դաւերուն ու սաղքուածքներուն, որոնք այնքան առաջ գացին, որ ալ սկսաւ հանրային խիզճը դղրդիլ ու բողբոջեց:

Յունիս 23 ի Միթիսկը բուռն արտայայտութիւնը եղաւ այդ ընդհանուր բողբոջին:

Ու ահա՛ առանց քստմնելու չէք կրնար դիտել թէ՛ սա վիճակին մէջ իսկ՝ դեռ բան մ'ունին ըսելու, դեռ յուսահատական ճիգեր կը ըլլուին, մտքէ չանցած միջոցներ կը գործածուին ամենայն պաղարիւնութեամբ, օրէնքը սապալելու, արդարութեան ձայնը խեղդելու, որ ժողովուրդին ձայնն է:

Մենք ցաւելով կը դիտենք մարդոց այս անըմբռնելի չարագործ միտումը, արեւին գոյութիւնը ուրանալու

չափ ուրացութիւնը, հանշային բարօրութեան ու բարգաւաճման համար ցոյց տրուած անշահախնդիր ու անճշունէր հոգածութեան դէմ: Իրողութիւն մը որ ոչ մի մեղմացուցիչ պարագայ կը թողու ներողամիտ աչքով մը նայելու, հանդուրժելու բոլոր այն սաղքողներուն ու դաւաճաններուն, որոնք այնքան ընդունակութիւն ցոյց կուտան ամէն օրէնք, ամէն սրբութիւն առաթուր ընելու մի միայն իրենց անճանական սին փառքին ու գծուծ հաշիւներուն համար:

«Արշալոյս» կտրագողները զզուանքով անցան անշուշտ այն տողերուն վրայէն, ուր այնքան բացարձակ ու շարամտօրէն ապուշ գիտաւորութիւնը կար արժանապատուութիւնները վիրաւորելու այնպիսի մարդոց որոնք ժողովուրդին համակրանքն ու վստահութիւնը շահած ըլլալնուն գործնական ապացոյցները տուին դէպի անոր շահերն՝ իրենց ցոյց տուած անվիճելի նախանձախնդրութեամբը. մինչ «Արշալոյս» ի պէս թերթ մը որ մամուլին արատը եղաւ իր նողկալի գոյութեան առաջին օրէն իսկ՝ կը յանդգնի, դեռ կը յամառի հայհոյել ճշմարտութեան դէմ, օրէնքին ու արդարութեան դէմ՝ ճիշտ արեւին դէմ հաչող շուններուն պէս, ինչպէս ըրաւ լոյսը իսպառ մարած ու անհետացած Փարոսի խմբագիրը:

Ա՛խ, ուրացողներ, քանի մը փառայի համար ազգ հայրենիք ծախող դաւաճաններ, չի կարծէք որ ալ պիտի կրնաք մտքերը չփոթել, խաբել, ձեր սուտերովն ու գաւերովը: Այլեքսանդրիոյ հասարակութիւնը կը ճանչնայ իր բարեկամներն ու թշնամիները, այլևս կը ճանչնայ իր առաջնորդներն, իր մեծերն ու պղտիկները, աղգօգուտ մամուլն ու ազգամիտասը:

«Փիւնիկ»՝ որուն դէմ կը կազկանձէր «Արշալոյս», իր ետին ստուար բանակ մը ունի ճշմարտութեան բա-

րեկամներուն, հաստատուն կռուանը՝ վեհանճնօրէն մարտնչող իրաւունքին. «Փիւնիկ» իր անճնուիրութեան ապացոյցները տալու մտահոգութիւնը չունի, վասնզի ճշմարտութեան անվեհեր պաշտպանի իր գիտակցութեանը հետ դերագոյն հաճոյքն ունի:

Ու այս բոլորը կը նշանակենք ոչ թէ պատասխանած ըլլալու համար Եգիպտոսահայ մաւնոյիկն կեղծ ճակտին վրայ կրող փողոցի փերեզակ թերթին, — որ իր ամբողջ գոյութիւնը կը պարտի ժողովուրդին աններելի ներողամտութեանը — այլ անգամ մ'ալ կրկնելու համար ազգային մեծհրապաշտպան անմահ Գ. Արծրունիի հետեւեալ խօսքերը:

Գրագէտից, յրագրի խմբագրից պիտի պահանջեմք, որ նա հետագօտի հասարակական հողը, քննի նրան կազմող մասերը, զարթեցնի քննած մտաւոր գործիքներ, յարուցանի մտաւոր հարուստ հանկերի արդիւնաբերութիւնը...

1971

### ՔՐՈՆԻԿ

— ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ երկու խումբեր ունեցանք այս տարի Եգիպտոսի մէջ — Գահիրէ եւ Աղեքսանդրիա — երկուքն ալ վառվռուն երիտասարդ սիրողներէ եւ ծանօթ դերասաններէ բաղկացած: Այս երկու խումբերը գեռի բնոց սաղմին մէջ են: Ասպարէզը փշուտ է դերասանին. քանի՛ քանի՛նք ըուն տեսանք երեւումը, փառաւորումը, ու յետոյ, լքումը, փճացումն ու ի վերջոյ անհետացումը հիւանդանոցի մը մէջ...

Եւ սակայն պէտք է ապրի թատրոնը, հասարակութեան ապրող գործող, տառապող ու կռուող սերունդին այս դպրոցը, ուր կը տաշուի

մարդկութիւնը, կ'ազնուանան կիրքերն ու բարքերը, կը բարձրանայ մակարդակը ցեղին, բարոյական թէ մտաւորական: Ազգերուն մեծութեան աստիճանաչափը թատրոններուն թիւին մէջ փնտռել պէտք է:

Օտարները, նոյն իսկ Արաբները, տէր են թատրոններու, դերասանական խմբերու. կը յաջողին, օրինակ առնենք. բայց անոնց յաջողութեան ու յարատեւութեան գաղտնիքը պէտք է թափանցել. անոնք, թատերասէր անգամներէ բաղկացած հասարակութիւններ են, այո՛, բայց մերայի՛նք եղած են հիմնադիրները թուրքիոյ թատրոններուն, եւ հետեւաբար, մենք աւելի թատերասէր ժողովուրդ մ'ըլլալու հպարտութիւնը կրնանք ունենալ: Սակայն, ժողովուրդը կը սիրէ լսել ու տեսնել իր ցեղին կեանքէն, բարքերէն ու արկածներէն քաղուած թատերախաղեր: Դիւցազնական դարերուն հրաշքները, նախճիրներն ու պատերազմներն ա՛յնքան քիչ կը խօսին ներկայ սերնդին հոգիին հետ, որքան աւելի կը շահագրգռուի անի ու կը ցնցուի այժմէական տուաճներէն: Ուրեմն, երկու խումբերն ալ թող ջանան ընտրելու Բիւնաներ մե՛ր կեանքէն, մե՛ր բարքերէն ու ներկայ՛ գէպքերէն:

Այն ատեն, պիտի յարատեւէ թատրոնը, պիտի քաջալերուին թատերական խումբերը:

Օտարներու թատերաբեմը կ'ենեն դերասաններու թիւէն աւելի դերասանուհիներ. այս վերջինները, չը ծածկենք մեղքերնիս, գեռ բերաննին չը բացած, լո՛կ իրենց երեւոյթովը կը խլեն ամբոխին մոլեգին ծափերը. օտար խումբերը՝ գիտեն այս տկար կողմը, գեղեցիկ սեռը պաշտելու հոգեբանութիւնը մարդուն, ուստի, իրենց բոլոր եւժը կը կեդրոնացնեն լաւ դերասանուհիներ պատրաստելու եւ

պահելու մէջ. իսկ մենք, այր ու եղբայր, հայր և մայր, կը զայրանանք երբ կ'առաջարկուի մեզի մեր կիներ քոյրը կամ աղջիկը նուիրել թատրոնին, գեղարուեստի այդ սրբազան տաճարին մէջ պաշտօն մատուցանելու:

Ս.հա' մեր թերին ու դազոնիքը մեր անկումներուն:

Մեր շոշերը վաղուց վարժուած են կարխպաշի շրթունքէն կախուեալ ու օտարուհիի մը, ըլլայ գոնհիկ երգչուհի մը կամ գերասանուհի մը: Լանա'նք արհամարհել այդ պիսիներուն նեցուկը, ապրեցնելու համար հայկական թատրոններ. այդ նեցուկը սպասենք ժողովուրդի միջին գասակարգէն մանաւանդ, քիչ թէ շատ զարգայած ու զգացող երկտասարդութենէն: Եթէ կամք ըլլայ, քիչ ատենէն կրնանք պարծենալ ճշմարիտ ու կատարեալ հայ գերասանական խմբով մը. աւելի յետոյ, հայ թատրոնով մը, որուն հիմնուիլն իրագործելու և գոյութիւնն ապահովելու միակ պայմանէն է առաջին քայլէն իսկ հաստատել խնայողական արկղ ո՛ր, որ հետզհետէ պիտի պարալտանայ թատերասէր բարերարներու նուէրներով, համակիր ընկերակիցներու ամսավճարներով ու ներկայացումներէն խնայուած փոքրիկ հասոյթներով:

Գերասանական երկու խումբերն ալ պիտի ապրին, պիտի արմատ բռնեն հոս, Եգիպտոսի մէջ, եթէ վարժեցնեն իրենք զիրենք այսուհետեւ յարգելի ու համակրելի ընծայելու, ընտիր գերակատարութեամբ և կարգապահութեամբ:

Մենք սրտանց կը փափաքինք տեսնել Գահիրէի Հրայտայ և Աղեքսանդրիոյ Արեւելեան երկու խումբերուն յաջողութիւնները:

— ԳԱՀԻՐԷԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ամսվերջի հարցաքննութիւնները տեւելով մէկ շաբաթ, վերջացան

ամսոյս Ծին շաբաթ օրը:

Փիլիսիկի Տնօրէնը փափագելով օգտուիլ վերջերս իր ի Գահիրէ ըրած այցելութենէն, նոյն շաբթուան ուրբաթ և շաբաթ օրերը ներկայ եղաւ հարցաքննութեանց: Պարգեւաբաշխութիւնը պիտի տեղի ունենայ յառաջիկայ կիրակի Յուլիսի 13ին, Ս. Աստուածածնայ տաճարին մէջ:

Հարցաքննութեանց ու պարգեւաբաշխութեան վրայ կ'սպասենք մասնաւոր թղթակցութիւն մը, զոր պիտի հրատարակենք յաջորդով:

— Միթիւնկի երեք բանախօսութիւնները պարունակող գրքոյկը մօտերս լոյս պիտի տեսնէ Հայկ. «Արաքս» Տպարանէն:

Նոյն գրքոյկը պիտի պարունակէ նաև տեղիս ու Գահիրէի օտարազգի մամուլին գնահատումներն ու տեսութիւնները յիշեալ Միթիւնկին վրայ:

— «Արաքս» իր «խասակ ֆննադասուքիւններ»ով զորս զեւեղած է վերջին երկու քիւերուն մէջ — սուսերու, կեղծիքի, խեղաքիրումներու եւ հայհոյանքներու աղտոտ հաւաքածոյ մը կը բերէ իր անճնուէր ընթերցողներուն (եթէ գեռ կան):

Յիմար բան է այդ քերթից խմբագիրը պասախանասու բունել սրնակներ ու էջեր սեցնող եկայն յոգուածներուն, որոնց մէջէն իր բոլոր գաւառներէն կը հոսի միեւնոյն Անթաղ Դիակը...:

Պայքարը մղած ենք մենք օրէնքին բռնաբարման դէմ, հետեալբար, արաժամ ու անպատեհ դասած ենք, գէթ առ այժմ, հրապարակի վրայ բերել եկեղեցապահական կալուածներու վաճառման, աննոռնի շէնքի մը շրջափակ, Աղբասախնամի խեղճութիւններուն, ազգ. երկ. վարժարանին աննախանձելի կացութեան, հոն անցած դարձած անհանդիմանութիւնն ու իր ճանաչողութիւններ, միշտ սպասելով

որ սահմանադրական վարչութիւն մը գործի գլուխ անցնի ու քննէ այդ բոլորը:

Պակայն քանի որ հասարակութեան մեքեր պղտորելու բացայայտ չարամտութեամբ եւ ուրիշ անխառն վանելի թագուն դիտումներով, խնամակալութեան մը հաւելոյն փաստաբանի դեր սահմանողները չ'են խղճեալ յանուն նրամարտութեան եւ ազգային շահերուն ստելու, կը յայտարարենք թէ՛ ՓԻԻՆԻԿը պիտի սկսի հրատարակել այսուհետեւ ինչ որ գիտէ վերոյիշեալ խնդիրներուն նկատմամբ:

Ու այս աշխատանքը յանձն կ'առնենք միայն լուսաւորելու համար ժողովուրդն ու զայն զգուցացնելու իր ռիսկերիմ թեւադրանքներէն:

— ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ՄԻՈՒԹԻՒՆ մը կազմուած է քաղաքիս մէջ Մայիս 1էն ի վեր: Այս Միութեան հիմնադիրները, գրեթէ բոլորն ալ զարգացած ու բարձր ուժեր, եգիպտահայ երիտասարդութեան չարդը պիտի կազմեն, եթէ յամառ մահառումով մը յաջողի՛ն իրագործել առաջադրած իրենց վստմ նպատակը, որ է, կէս առ կէս ջանալ գործադրել անմահ ԵՐԿԱԹին ծրագիրը, ազգային ազատագրութեան համար, եւ միշտ կազմակերպել լսարաններ, ժողովուրդը պատրաստել զոհաբերութեան, մէկ խօսով, երիտասարդութիւնը վերա՛յանգնել: Պատեն առիթը պիտի ունենանք մօտեւաւ աւելի մանրամասնօրէն գրելու սոյն տպար Միութեան նպատակին ու ծրագրին վրայ:

Մեր արագին խնդակցութիւնները կրկնելով կը մտադրենք յարատեւութիւն եւ բարգաւաճում:

— ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿՆԻՄԲԸ ներկայ ամսոյս 11ին ուրբաթ իրիկուն ժամը 9ին Բ/րաւ/իս բասրոնին

մէջ պիտի տայ իր անդրանիկ ներկայացումը Ի/ի Ահպայ Չախոշար (Երկու Յիսնապետ): Թատերաւէր հասարակութիւնը, ինչպէս ուրիշ անգամներ պէ՛տ է քաջալերէ այս նորակազմ խումբը, որ կը յուսանք թէ պիտի կրնայ պոսանել իր վրայ դուած յոյսերը, տեղիս ժողովուրդին սէրն ու համակրանքը դարձնելով դէպ ի թատրոն:

— ՊԻՒԻՔՍԷԼԻ ԳՅՆԿՐԷՆ — ԲՐՈ ԱՐՄԵՆԻԻ 25 Յունիսի թիւին մէջ կը կարդանք. «Հայաստանեան միջազգային գօնկրէն պիտի Գումարուի Պրիւսէլ, Յուլիսի 17ին ու 18ին: Կը հրատարակենք այսօր ճրանակահան հաւանութեանց առաջին ցանկը: Եւրոպայի բոլոր երկիրներէն ընդունած ենք հաւանութիւններ նոյնքան կարեւոր եւ նոյնքան բազմաթիւ ամեն կուսակցութեանց, ամեն կրօններու եւ իմաստասիրական դպրոցներու, ամեն ընկերային դասակարգերու մարզերէ:»

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ Հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ: